Արձանագրության 3
ԵՔ-ԳՀԾՁԲ-19/174 ծածկագրով գնման ընթացակարգի
հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09.10.2019թ.
Ժամը՝ 10:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հարությունյան /գնահատող/, Ա. Սարգսյան /գնահատող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Աբրահամյան /բացող/, Ա. Հովհաննիսյան /բացող/ Թ.Հովեսյան

1. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

1.2 Ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Կիրակոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/174 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **ԵՔ-ԳՀԾՁԲ-19/174** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել **«Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաշվի առնելով, որ ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Սարգսյան

---------- Ռ. Աբրահամյան

---------- Ա. Հովհաննիսյան

Քարտուղար՝ ---------- Թ.Հովեսյան